ԳԼԽՆՏԵՍԱՅԻՆ
ԲՐԻԳԱԴԱՅԻՆ
Ի ԹԵՐԹԵՐԻ
ԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ
ԱՐՔՆԹԱՅՆԵՐ։

Крестьянская Газета Խորհրդային Հայաստան

ՌԱՀՅՈՍ ԶԵԿՈՒՑ

ՈՐԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻ ՅԵՎ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դասախոսություն 5-րդ

Կազմեց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագրեց պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ

(Բ) Կ ԿԿ
ԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ»,
ԵՐ 1937 Թ.

2-42

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի դասընթացի նպատակն է կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերի խմբագիրներին ու թղթակիցներին սովորեցնել՝ իրենց մտքերն արտահայտել պարզ ու ճշտորոշ

Այդ ունակությունը ձեռք բերելու համար հեռակայողը նախ պետք է կարողանա ազատ կարդալ, առանց տառասխալների ու կետադրական սխալների գրել և նյութը դասավորել վորոշ ծրագրով: Նա պետք է կարողանա նաև յերգիծանք մտցնել իր վորոշ նյութերի մեջ, վորպեսզի ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնի թերթը, ավելի շատ ընթերցող ներգրավի, վորով և ավելի լավ կհասնի իր նպատակին:

Հայոց լեզվի կոնսուլտանտը հենց այս նպատակներն էլ պետք է հետապնդի:

Հեռակայողներին լեզվի հատուկ դասագիրք չի ուղարկվում: Լեզվի կոնսուլտանտն ինքը, նկատի ունենալով հեռակայողների պատրաստության, և յուրաքանչյուր խմբի հետ պարապել առանձին դասընտրել մասսայական դպրոցների համար հրատարակված դասագրքերից: Կարելի յե նաև դասագրքի փոխարեն ոգտագործել վորևե տպագիր թերթ (շրջանային, կենտրոնական), հենց հեռակայողների լույս ընծայած պատի թերթերը և այլն:

Կարելի յե հեռակայողներին խմբերի բաժանել՝ ըստ նրանց պատրաստության, և յուրաքանչյուր խմբի հետ պարապել առանձին դասագրքով:

Սույն «Ոժանդակ ձեռնարկ»-ը, վոր կազմված և գոյություն ունեցող քերականության դասագրքերի ոգտագործումով, նպատակ ունի վորոշ չափով նպաստել լեզվի կոնսուլտանտի աշխատանքին: Սրա մեջ դրված է հայոց լեզվի քերականության համառոտությունը, վորը կոնսուլտանտի համար ուղեցույց կլինի, իսկ հեռակայողների համար՝ ոժանդակ նյութ՝ կոնսուլտանտի անցածն ավելի լավ յուրացնելու համար:

Հասկանալի յե, վոր այսքան փոքրածավալ գրքույկում հնարավոր չեր քերականության բոլոր կանոններն իրենց բոլոր մանրամասնություններով դնեցնել: Գիրքը կազմելիս հաշվի յենք առել, վոր պակասը կլրացնեն լեզվի կոնսուլտանտները, վորոնք շրջանային կենտրոնի դպրոցի լավագույն դասատուներից են լինելու:

Գարատմունքի ընթացքում զլխավոր շեշտը պիտի դնել գործնական աշխատանքի վրա: Դասախոսության սխեմայով լեզու սովորեցնել

հնարավոր չէ։ Հեռակայողներին չարունակ գործնական աշխատանքներ պիտի տալ և հենց այդ աշխատանքներն ուղղելու ընթացքում սովորեցնել քերականության հիմունքները, ընդունված կանոններն ու որենքները։

Ամբողջ ձեռնարկը բաժանված է 8 դասի (յուրաքանչյուր դասը յերկու ակադեմիական ժամ), վորի հետևանքով նյութը ծայրահեղորեն խտացված է։ Սակայն այդ արված է նկատի առնելով այն հանգամանքը, վոր պարապմունքները վերջանալուն յերկար ժամանակ չի մնացել։ Տեղական պայմաններից յելնելով, յեթե ժամանակը ներում է, կոնսուլտանտը կարող է դասերի թիվն ավելացնել, վորով ավելի շատ ժամանակ կունենա նյութը մանրամասնորեն անցնելու համար։

ԿԱԶՄՈՂ.

ԻԴԱՍ

ՀՆՉՅՈՒՆ, ՏԱՌ, ՎԱՆԿ

Հնչյուն և տառ.—Հնչյունի գրավոր արտահայտությունը կոչվում է գիր կամ տառ: Հայոց լեզվի այբուբենն ունի հետևյալ տառերը. ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

Բացի սրանից կան նաև «և» նշանագիրը, որը յ+ե+ւ տառերի միացությունն է և արտահայտում է յեվ հնչյունները:

«Ու» հնչյունի համար առանձին տառ չկա մեր այբուբենում, այլ դա գրվում է «ո+ւ» յերկտառով: Է, Ի, Օ տառերը գործածվում են հին գրքերում: «Է» տառի հնչյունն է «Ե», «Ի» տառինը՝ «Վ» կամ «Ու», իսկ «Օ» տառինը՝ «Ո»:

Հնչյուններից կազմվում են բառեր, բառերից՝ նախադասություններ կամ խոսքեր, որոնցով արտահայտում ենք մեր մտքերը:

Մեր հնչյուններից վեցը ձայնավոր են (ա, ե, ը, ի, ո, ու), մնացածը՝ բաղաձայն:

Վանկը կազմվում է մեկ կամ մի քանի հնչյունից: Մեկ հնչյունն առանձին կարող է վանկ կազմել միայն այն դեպքում, յերբ ձայնավոր է: Ցեթե վանկը կազմված է մի քանի հնչյունից, դրանից ձայնավոր է միայն մեկը:

Միավանկ և բազմավանկ բառեր.— Ցեթե բառի մեջ միայն մեկ ձայնավոր կա, բառը միավանկ է: Ցեթե մեկից ավելի ձայնավոր կա, բառը բազմավանկ է:

Միավանկ բառեր.— Հավ, ոճ, ձի, գետ, ջուր:

Բազմավանկ բառեր.— Աթոռ, ապակի, մթնել=մըթնել, վարելահող, առաջատանավ, կոլտնտեսական, դասախոսություններ:

Տողադարձ.— Մի բան գրելիս, յերբ ամբողջ բառը մի տողի վերջում չի տեղավորվում, տողադարձ ենք անում, այսինքն՝ բառի մի մասը տանում ենք հաջորդ տողը: Այդ դեպքում տողի վերջում գրվում է յենթամնա (–) նշանը:

Տողադարձի ժամանակ բառը բաժանում ենք վանկերի և ամբողջ վանկը կամ վերի տողումն ենք գրում, կամ տակի տողն ենք անց կացնում: Վանկը կիսել չի կարելի: Դրա համար պետք է լավ իմանալ բառերը վանկերի բաժանելու կանոնը:

Բառերը վանկերի բաժանելիս՝

ա) Ցեթե յերկու ձայնավորների միջև կա մեկ բաղաձայն, այդ

բաղաձայնը տրվում է հաջորդ վանկին (ա–սա, ա–պա, Ա–վո, կա–տու, փո–ղոց, ա–պա–հով, ա–մե–նա–գո–րեղ):

բ) Եթե յերկու ձայնավորների միջև կա յերկու բաղաձայն, մեկ բաղաձայնը տրվում է նախորդ վանկին, մյուսը՝ հաջորդին (կար–միր, պատ–կեր, Վար–դան, ար–տա–կարգ):

գ) Յերկու ձայնավորների միջև յերկուսից ավելի բաղաձայն լինելու դեպքում վերջին բաղաձայնը պիտի տալ հաջորդ վանկին, մյուսները թողնել նախորդին (յերկ–րա–գունդ, արթ–նա–նալ):

դ) Բառերի մեջ «ը» ձայնավորը սովորաբար չի գրվում. որինակ՝ գրում ենք՝ մկրատ, սրտակից, մդկատալ, բայց արտասանում ենք, մըկրատ, սըրտակից, մըդկըտալ: Տողադարձ անելիս «ը» ձայնավորը միշտ գրվում է երբարից բաժանված վանկերի մեջ. որինակ՝ դըս–նել, քաղ–ցըր, մըկ–ըրատ, սըր–տա–կից, մըդ–կը–տալ:

Ձայնափոխություն.— Յերբ բառերից հետո նոր վանկ է ավելանում և շեշտն անցնում է դրա վրա, բառի վերջին վանկի ձայնավորը, շեշտը կորցնելով, մի շարք դեպքերում փոխվում է մի ուրիշ ձայնավորի կամ բաղաձայնի, կամ թե դուրս է ընկնում. որինակ՝ յերկիր—յերկրային, սիրտ—սըրտակից—սրտակից, այդի—այդեղործ, բարի–բարություն, ձու—ձվաձև, գարթուն—զարթնել, ջուր—ջըրաման–ջրաման, կես—կիսել, մատյան—մատենավար, լույս—լուսավոր, պաշտոնյա—պաշտոնեություն:

Ա. Շ Խ Ա. Տ Ա. Ն Ք

1. Անգիր իմանալ և գրել հայերենի այբուբենն ընդունված հաջորդականությամբ: Գրել ձայնավոր տառերն առանձին:

2. Գրել 10 միավանկ բառ, 20 բազմավանկ բառ:

3. Վանկերի բաժանել հետևյալ բառերը՝ մատիտ, տետրակ, առաստաղ, յերկրագործ, պատրվակ, կրունկ, բերքահավաք, դասընթաց, հրատարակչություն, անտնտեսավարություն, հարվածային, դրոդբռվել, խպշտել:

Ս Տ Ո Ի Գ Ի Ձ Հ Ա Ր Ց Ե Ր

ա) Վո՞րն է վանկի հիմքը:

բ) Վանկերի բաժանման որենքը ի՞նչ է հարկավոր լինում մեզ:

ԻԴԱՍ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶ, ԲԱՐԴ, ՑԵՎ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ. ԱՐՄԱՏ

Բարդ բառերը կազմվում են յերկու (սակավ անգամ՝ յերեք) բառի միացումից: Որինակ՝ կոշկակար բառը բաղկացած է կոշիկ և կար(ել) բառերից: Բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերի միջև սովորաբար դրվում է «ա» ձայնավորը (հոդակապ), որինակ՝ դաս-ա-դիրք: Բայց կարող է լինել նաև առանց դրան: Որինակ՝ հացթուխ:

Ածանցական բառերը կազմված են մեկ բառից կամ արմատից և մեկ ածանցից (ընկեր+ական, մատ+նոց, ձի+ավոր, հիանալ):

Ածանցները կամ ածանցական մասնիկները առանձին վերցրած՝ իմաստ չունեն, բայց յերբ սկզբից կամ վերջից միանում են բառին, նրան նոր իմաստ են տալիս. (ձի՝ կենդանի է, ավոր՝ առանձին վերցրած իմաստ չունի, ձի+ավոր՝ ձի նստած մարդ):

Բառի սկզբից միացող մասնիկները կոչվում են նախածանց (ան+առուն, դժ+բախտ, ո+գետ), իսկ բառի վերջից միացողները՝ վերջածանց (ող+ային, հարվածային, ոստիանավական, փայտեղեն, փոդոցային, գետակ):

Պարզ կամ արմատական բառ կոչվում են այն բառերը, որոնք վոչ բարդ են և վոչ էլ սկզբից կամ վերջից վորևե մասնիկ ունեն. որինակ՝ հաց, հող, վոչխար, բաժակ:

Արմատը բառի այն պարզ մասն է, վոր մենակ չի գործածվում իբրև առանձին բառ, այլ գործածվում է ածանցների հետ միացած, կամ ուրիշ բառերի հետ բարդված. որինակ՝ հի արմատից, վոր իբրև բառ չի գործածվում, կազմվում են՝ հիանալ, հիացում, հիասթափվել:

Ծանոթ.— Ածանցական բառերը կարող են կազմվել նաև բարդ բառերից (դասակարգ-ային, մատենագր-ական, փառասեր-ություն), ինչպես և ածանցական բառերից (ժողով-ուրդ, ժողովրդ-ական, ժողովրդական-ություն, համա-ժողովրդական և այլն:

Բարդ բառերը ևս կարող են կազմվել ածանցական բառերից, որինակ՝ ժողովուրդ, ժողովրդասեր:

ԿՐՃԱՏ ԲԱՌԵՐ.— Մեր լեզվում ինչպես նաև խորհրդային մյուս ժողովուրդների լեզուների մեջ, գործածվում են մի քանի բառերի

կրճատ միացման ձևերը. դրա համար վերցնում են.

ա) Մի բառն ամբողջությամբ, մյուս բառի մի մասը (առաջին—առողջապահության բաժին, դյուղխորհուրդ—դյուղական խորհուրդ և այլն):

բ) Երկու կամ յերեք բառերի մասերը (խմբկոլ—խմբագրական կոլեգիա, շրջգործկոմ—շրջանային գործադիր կոմիտե, կենտկոմ—կենտրոնական կոմիտե և այլն):

գ) Բառերի սկզբնատառերը (ԲՈՒՀ—բարձրագույն ուսումնական հաստատություն, ՄՏԿ—մեքենայական և տրակտորային կայան և այլն):

Պատի թերթի խմբագիրներին խորհուրդ է տրվում այս կարգի կրճատումներից խուսափել: Հաճախ այս կրճատումներն այնպիսի արտառոց ձևեր են ստանում, որ ընթերցողը վոչինչ չի հասկանում: Նման կրճատ միացություններով կարելի յե զործածել միայն այն բառերը, վորոնք վաղուց արդեն զործածության մեջ են մտել և ընթերցողներին լավ ծանոթ ու հասկանալի յեն:

ԲԱՌԵՐՆ ԻՐԱՐ ՆԿԱՏՄԱՄԲ և ըստ իրենց խմաստի լինում են.

ա) Նույնանիշ (նույն նշանակություն ունեցող) այտ—թուշ, մաղ—հեր, վախ—յերկյուղ և այլն:

բ) Համանիշ (նման նշանակություն ունեցող) հիանալի—սքանչելի, ավարտել—վերջացնել, նուրբ—քնքուշ և այլն:

գ) Համանուն — գրությամբ իրար նման են, նշանակությամբ՝ տարբեր, ոլինակ, հոտ (վոչխարի), հոտ (ծաղկի), սեր (կաթի), սեր (զգացմունք) և այլն:

դ) Հականիշ— իրար միանգամայն հակադիր խմաստ ունեն (սուր, բութ, կարճ, յերկար, մեծ, փոքր և այլն):

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Գրեցեք 10 պարզ, 10 բարդ բառ, 5 նախածանցով և 5 վերջածանցով բառ:

Սույն հատվածն արտագրեցեք, ածանցված բառերի տակ մեկ գիծ քաշելով, բարդ բառերի տակ՝ յերկու գիծ:

«Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհրդային տնտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում, պետական սեփականություն, այսինքն համաժողովրդական ունեցվածք են»:

(ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության 6-րդ հոդվածը)

ԻԴԱՍ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մասեր.— Խոսքի մասերն են՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն:

Գոյական կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս մեզնից դուրս և մեզնից անկախ գոյություն ունեցող որևէ առարկա, կամ երբեմն այդպիսին մտածված վերացական առարկա, հասկացողություն (գիրք, սեղան, նստարան, ջուր, ոգ, հող, մարդ, թռչուն, դարմանք, փառք, քաջություն, տանջանք):

Գոյական անունները լինում են հատուկ և հասարակ:

Հատուկ անուն կոչվում են այն գոյական անունները, որոնք տրվում են նույն տեսակի առարկաներից միայն մեկին առանձին վերցրած, այսպես են մարդկանց անունները (Տիգրան, Սուրեն և այլն), աշխարհագրական հատուկ անունները՝ քաղաքների, գյուղերի, գետերի, լճերի, ծովերի լեռների անունները (Ցերևան, Հայաստան, Կաղբեկ, Քուռ, Կիրովաբաղ և այլն):

Հասարակ կոչվում են այն անունները, որոնք տրվում են միևնույն տեսակի բոլոր առարկաներին, որինակ՝ բոլոր ծառերին ասում ենք ծառ, բոլոր կովերին՝ կով, բոլոր գրքերին՝ գիրք:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՎԸ

Գոյականներն ունեն յերկու թիվ — յեզակի և հոգնակի:

Յերբ գոյականը ցույց է տալիս մեկ առարկա, յեզակի յե (որինակ՝ գիրք, մատիտ, թերթ, դասախոս, ուսանող), յերբ ցույց է տալիս մի քանի առարկա՝ հոգնակի յե (որինակ՝ գրքեր, մատիտներ, թերթեր, դասախոսներ, ուսանողներ):

ՀՈԳՆԱԿԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ

ա) Միավանկ յեզակի բառերը հոգնակի դարձնելու համար վերջից ավելացնում ենք եր, որինակ՝ կով—կով+եր, հավ—հավ+եր, քար—քար+երը, սար—սար+եր:

բ) Բազմավանկ յեզակի բառերը հոգնակի դարձնելիս վերջից ավելացնում ենք ներ, որինակ՝ ուսանող—ուսանող+ներ, դասարան—դասարան+ներ, նախիր—նախիր+ներ, պահարան—պահարան+ներ:

Ուշադրություն դարձրեք, յերբ բազմավանկ բառը յեզակի թիվում վերջանում է ն տառով, հոգնակի դառնալիս յերկու ն յե լի-

նում իրար մոտ: Դրանցից մեկը բառավերջի «ն»-ն է, մյուսը՝ «ներ» մասնիկի սկզբնատառը, որինակ՝ դասարան—ներ, պատճեն—ներ: Գրաբարից մնացած հոգնակի ձևեր են՝ վորդիք, տղայք և նմանները, փոխանակ՝ վորդիներ, տղաներ ձևերի:

Մի շարք բառեր գրաբարում վերջանում են ն տառով, աշխարհաբարում այդ ն տառը դուրս է ընկել: Այժմ այդ բառերի հոգնակիում վերականգնվում է դուրս ընկած ն տառը (որինակ՝ մատ—մատներ, դուռ—դռներ, ձեռ—ձեռներ և այլն):

Բարդ բառերը հոգնակի կազմելիս ա) յերթե յերկրորդ բաղադրիչ մասը միավանկ է և այդ միավանկ բառը բարդության մեջ ել պահում է իր նշանակությունը, հոգնակիում ստանում է «ԵՐ» մասնիկը:

բ) Յերթե այդ միավանկ բառը բարդության մեջ իր նշանակությունը կորցնում է ու մի նոր իմաստ է ստանում, հոգնակիում ստանում է «ՆԵՐ» մասնիկը (դասագիրք=դասի գիրք, հոգնակի՝ դասագրքեր, սեահող=սև հող, զորապունդ=զորքի գունդ, հոգնակի՝ սեահողեր, զորագնդեր: Բայց ձկնորս, մարդասեր նշանակում են վոչ թե ձկան վորս, մարդու սեր, այլ ձուկ վորսացող, մարդ սիրող, հոգնակի՝ ձկնորսներ, մարդասերներ):

ՀՈԼՈՎՈՒՄ

Գոյականները, նայած թե խոսքի մեջ ինչպիսի պաշտոն ունեն, զանազան ձևերով փոփոխվում են: Գոյականի այդ փոփոխության ձևերը կոչվում են հոլով:

Առանձին հոլովները կոչվում են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական (վերջավորությունը՝ ից, ուց), գործիական (վերջավորությունը՝ ով), ներգոյական (վերջավորությունը՝ ում):

Հայցականը նման է ուղղականին, սեռականը՝ տրականին:

Հոլովենք սենյակ գոյականը.

	Յեզակի թիվ	Հոգնակի թիվ
Ուղղական-հայցական—	սենյակ	սենյակներ
Սեռական-տրական—	սենյակի	սենյակների
Բացառական—	սենյակից	սենյակներից
Գործիական—	սենյակով	սենյակներով
Ներգոյական—	սենյակում	սենյակներում

Գոյականների մեծ մասն այսպես են հոլովվում: Կան գոյականներ, վորոնց սեռական-տրականը վերջանում են վոչ թե ի—ով, այլ ու—ով, բացառականը՝ ուց (վորդի—վորդու, վորդուց), ուրիշները՝ ան—ով, ոջ—ով և այլն): Ըստ այդ հատկանիշների ունենք հետևյալ հոլովումները — ի, ու, ան, վա, ով, որ, ց:

Ուղղ. հայց. — սեղան, վոսկի, դուռ, որ, քույր, հայր, Տիգրանենք
Սեռ.-տր. — սեղանի, վոսկու, դռան, որվա, քրոջ, հոր, Տիգրանենց

Մարդ, կին բառերը հոգնակի ունեն՝ մարդիկ, մարդկանց, մարդկանցից և այլն, կանայք, կանանց, կանանցից և այլն:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

1· Գրեցեք 7 հատ միավանկ և 5 հատ բազմավանկ գոյական անուններ, դարձրեք հոդնակի:

2· Գրեցեք 5 հատ հասարակ և 5 հատ հատուկ անուններ:

3· Հոլովեցեք հետևյալ գոյականները՝ քաղաք, գինի, այգի, ձուկ, ուսում, կառավարություն, բոբոքում, տուն, գարուն, ամառ, ընկեր, մայր:

Ս Տ Ո Ւ Գ Ի Ջ Հ Ա Ր Ց Ե Ր

ա) Վորո՞նք են գոյական անունը հոդնակի դարձնելու կանոնները:

բ) Ի՞նչ չեզու

կան այդ կանոնից.

IV ԴԱՍ

ԱԾԱԿԱՆ

Ածական կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի հատկությունը, որակը, որինակ՝ կարմիր, լայն, մեծ, խելոք, կլոր, թույլ:

Ածականները դրվելով գոյական անվան վրա՝ անփոփոխ են մնում՝ որինակ՝ մեծ դիրք, մեծ դրքի, մեծ դրքեր և այլն: Բայց յերբ մենակ գործածվում են իբրև գոյական, հոլովվում են ինչպես գոյականներ. որինակ՝ մեծ, մեծի, մեծից և այլն, բարի, բարու, բարուց և այլն:

ԹՎԱԿԱՆ

Թվական կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի քանակը կամ կարգը. որինակ՝ յերեք, յոթը, ութը, ինը, տասը, տասնմեկ, հիսուն, վաթսունչորս և այլն: Առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ, վեցերորդ, տասնհինգերորդ և այլն: Առաջինները կոչվում են քանակական թվական, յերկրորդները՝ դասական թվական:

Դասական թվականներից «առաջին» բառն առանձին կազմություն ունի, հետևյալ յերեքը կազմվում են քանակական թվականի արմատի վրա ավելացնելով ՐՈՐԴ մասնիկը, իսկ մնացածների վրա՝ ԵՐՈՐԴ մասնիկը (յերկ+ՐՈՐԴ, յեր+ՐՈՐԴ, չոր+ՐՈՐԴ. հինգ+ԵՐՈՐԴ. վեց+ԵՐՈՐԴ, յոթն+ԵՐՈՐԴ, ութ+ԵՐՈՐԴ, ինն+ԵՐՈՐԴ, տասն+ԵՐՈՐԴ, տասնվեց+ԵՐՈՐԴ, յեվ այլն: Դրա համար էլ «յերրորդ», «չորրորդ» դասական թվականները դրվում են յերկու ՐՈՎ:

Ուշադրություն դարձրեք նաև, որ յոթը, ինը, տասը բառերի վերջի Ն տառը, որ դուրս է ընկել, վերականգնվում է (յոթներորդ, իններորդ, տասներորդ):

Դասական թվականները բառերով դրելու փոխարեն կարելի յե դրել՝

1) Հռոմեական թվանշաններով (I, II, III, IV, V, VI, VII... XIV... XIX... XXII... XXIX, XXX... XXXV... XL, XLI... L, LI. LIX., LX. LXI.; և այլն:

2) Հայերենի այբուբենից կազմված թվանշաններով՝ ա), բ), գ), դ), ե), զ), է), ը), թ), ժ), ժա), ժբ), ժթ) ...ի), իա), իբ), ... իթ) և այլն:

Այս դեպքում ա—թ միավորներն են, ժ—ղ՝ տասնավորները—(ժ=10, ի=20, լ=30, խ= 40, ծ=50 կ= 60, հ=70, ձ=80, ղ=90 ճ—չ՝ հարյուրավորները, ռ—ք հազարավորները։

3) Արաբական թվանշաններով՝ 1-ին, 2-րդ 3-րդ··· 9-րդ··· 15-րդ, 176-րդ և այլն։

Թվականներն իրրև ածական դրվելով գոյականի հետ, անփոփոխ են մնում. որինակ՝ յերկու գիրք, յերկու գրքի և այլն։ Բայց յերբ մենակ գործ են ածվում իրրև գոյական, հոլովվում են ինչպես գոյականները. որինակ՝ վեց, վեցի, վեցից և այլն։

Յերբ գոյական անունը գործ է ածվում թվականի հետ, սովորաբար այդ գոյականը, յերբ անորոշ է, դրվում է յեզակի թվով, թեկուզ նշելիս լինի մեկից ավելի առարկա (որինակ՝ վեց մարդ, յոթ կով, հինգ սրաթերթ)։

Գոյական անունը թվականի հետ գործածելիս հոգնակի թվով և դրվում այն դեպքում, յերբ անհրաժեշտ է հատկապես չեշտել գոյականի բազմաթիվ լինելը, առանձնապես, յերբ գոյականը վորոշ է (Բազմի 26 կոմունարները, Գերմանիայի տասնյակ հազարավոր գործաղուրկները և այլն)։

ՀՈԴԵՐ

Հոդ կոչվում են ը, ը, ը (ձայնավորներից հետո՝ ս, դ, ն) բառերը, վորոնք մենակ չեն գործածվում, այլ դրվում են անվան վրա վերջից և նրա հետ միացած են դրվում. որինակ՝ գիրքս (=իմ գիրքը), գիրքդ (=քո գիրքը), գիրքը (=նրա գիրքը, կամ մի ծանոթ, վորոշ գիրք), սովորական գրությամբ՝ գիրքս, գիրքդ, գիրքը կամ գիրքն։

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանուն կոչվում են այն բառերը, վորոնք նախադասության մեջ դրվում են գոյական անվան (հատուկ կամ հասարակ) փոխարեն։

Դերանվան մի քանի տեսակները կան.

ա) Անձնական (յես, դու, նա, ինքս, ինքդ, ինքը)։

բ) Ցուցական (այս, այդ, այն, սա, դա, նա)։

գ) Ստացական (իմ, քո, իր, մեր, ձեր, իրենց)։

դ) Փոխադարձ (իրար, միմյանց)։

ե) Հարցական (ո՞վ, ի՞նչ, վո՞ր, քանի՞, վո՞րքան, ի՞նչքան, վո՞րպես և այլն)։

Դերանուններն իրրև գոյական հոլովվում են հետևյալ ձևով՝

Յեզակի

Ուղղ.—	յես,	դու	նա	ինքը	ո՞վ
Սեռ.—	իմ	քո	նրա	իր	ու՞մ
Տր.—	ինձ,	քեզ	նրան	իրեն	ո՞ւմ
Հայց.—	ինձ,	քեզ	նա, նրա	ինքը, իրեն	ո՞ւմ, ո՞վ
Բաց.—	ինձնից	քեզնից	նրանից	իրենից	ումնի՞ց
Գործ.—	ինձնով	քեզնով	նրանով	իրենով	ումնո՞վ
Ներգ.	ինձնում	քեզնում	նրանում	իրենում	ումնու՞մ

Հոգնակի

Ուղղ.	մենք	դուք	նրանք	իրենք	ովքե՞ր
Սեռ.—	մեր	ձեր	նրանց	իրենց	.....
Տր.—	մեզ	ձեզ	նրանց	իրենց	.....
Հայց.—	մեզ	ձեզ	նրանց	իրենց	.....
Բաց.—	մեզնից	ձեզնից	նրանցից	իրենցից	.....
Գործ.—	մեզնով	ձեզնով	նրանցով	իրենցով	.....
Ներգ.—	մեզանում	ձեզանում	նրանցում	իրենցում	.....

Նա դերանվան պես հոլովվում են՝ սա, սրա, սրան, սրանից և այլն. դա, դրա, դրան և այլն:

Այս, այդ, այն դերանունները չեն հոլովվում: Դրանք հաճախ գործածվում են ածականաբար. օրինակ՝ այս գիրքը, այս գրքի և այլն:

Ածական դերանուն են նաև՝ քանի, վորքան, ինչպիսի և այլն:

Ա. Շ Խ Ա. Տ Ա Ն Ք

Արտագրեցեք հետևյալ հատվածը՝ ընդգծելով ածականները, թվականները և դերանունները.

«Մեր կոլտնտեսության բրիգադներն այս տարի դաշտ դուրս յեկան մեծ յեռանդով: Նրանք ցանքը կատարեցին վեց որում, բարձր վորակով, գտած ու սիստահանած սերմով: Սրա հետևանքով այս տարի ավելի շատ բերք ենք սպասում, քան անցյալ տարի: Ցանքից հետո կոլտնտեսության վարչությունը յերրորդ բրիգադին բարձրացրեց կարմիր տախտակին»:

Ա Տ Ո Ի Գ Ի Զ Հ Ա Ր Ց Ե Ր

ա) Վո՞ր բառերն են կոչվում ածական:
բ) Ածականը յե՞րբ չի հոլովվում և յե՞րբ է հոլովվում:
գ) Թվականները քա՞նի տեսակ են լինում:
դ) Թվականը յե՞րբ չի հոլովվում և յե՞րբ է հոլովվում:
ե) Դերանունները յե՞րբ են գործածվում:
զ) Վորո՞նք են դերանունների տեսակները:
է) Վորո՞նք են հոդերը:
ը) Ի՞նչ նշանակություն ունի ս հոդը:

Վ Դ Ա Ս

Բ Ա Յ

Բայ կամ դիմավոր բայ կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն կամ լինելություն (անել, լինել, է, կա) և դեմք (անձ), որին վերագրվում է գործողությունը:

Դեմքը յերեք տեսակ է. առաջին դեմք՝ խոսող անձը (յեզակի՝ յես, հոգնակի՝ մենք), յերկրորդ դեմք՝ խոսակից անձը, որին դիմում է խոսողը (յեզակի՝ դու, հոգնակի՝ դուք), յերրորդ դեմք՝ մի ուրիշ անձ կամ իր, որ ոչ խոսողն է, ոչ խոսակիցը (յեզակի՝ նա, հոգնակի՝ նրանք): Որինակ՝ խոսողը գնալու գործողություն վերագրելով իրեն, ինքն իր համար ասում է գնացի (=յես գնացի, առաջին դեմքի բայ). խոսակցին վերագրելով գործողությունը՝ ասում է՝ գնացիր (=դու գնացիր, յերկրորդ դեմքի բայ). իսկ մի ուրիշի համար՝ գնաց (=նա գնաց, յերրորդ դեմքի բայ):

Բայը յեզակի թվով է, յերբ դեմքը մի առարկա յե ցույց տալիս. հոգնակի թվով է, յերբ դեմքը մեկից ավելի առարկա յե ցույց տալիս: Որինակ՝ գնաց՝ յեզակի յե (նա մենակ գնաց). գնացին՝ հոգնակի յե (նրանք բոլորը գնացին):

Դ Ե Ր Բ Ա Յ

Բայերի արմատներից կամ բներից, ալ, ել, ած, ում, լիս, թյուն ցույց տվող գոյականներ և ածականներ (ու մակբայներ), որոնք դեմք չունեն և կոչվում են դերբայ կամ անդեմ բայ. որինակ՝ գնալ, գնացած, գնալու, գնալիս, գնում, դրել, դրած, դրելու, դրելիս, դրում:

Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

Բայի փոփոխությունները, որոնցով կազմվում են բայի ձևերը, կոչվում են խոնարհում: Ձևերը պարզ են, յերբ մի բառ են, բաղադրյալ են, յերբ կազմված են մի դերբայից և եմ կամ լինեմ բայերի ձևերից:

Բայի ձևերը ցույց են տալիս՝ դեմք, թիվ, ժամանակ (ներկա, անցյալ, ապառնի) և յեղանակ (սահմանական, հրամայական, ըղձական, յենթադրական, հարկադրական):

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

(Գլխավոր ձևերը)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ներկա

Յեզակի	Հոգնակի
Գրում եմ	Գրում ենք
Գրում ես	Գրում եք
Գրում է	Գրում են

Անցյալ անկատար

Գրում էի	Գրում էինք
Գրում էիր	Գրում էիք
Գրում էր	Գրում էին

Ապառնի

Գրելու յեմ	Գրելու յենք
Գրելու յես	Գրելու յեք
Գրելու յե	Գրելու յեն

Ապառնի անցյալ

Գրելու էի	Գրելու էինք
Գրելու էիր	Գրելու էիք
Գրելու էր	Գրելու էին

Վաղակատար

Գրել եմ	Գրել ենք
Գրել ես	Գրել եք
Գրել է	Գրել են

Վաղակատար անցյալ

Գրել էի	Գրել էինք
Գրել էիր	Գրել էիք
Գրել էր	Գրել էին

Հարակատար

Գրած եմ	Գրած ենք
Գրած ես	Գրած եք
Գրած է	Գրած են

Հարակատար անցյալ

Գրած էի	Գրած էինք
Գրած էիր	Գրած էիք
Գրած էր	Գրած էին

Անցյալ կատարյալ

Գրեցի	Գրեցինք
Գրեցիր	Գրեցիք
Գրեց	Գրեցին

Հրամայական

Գրի՛ր	Գրեցե՛ք

(Ունի միայն յերկրորդ դեմք)

ԸՂՁԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի

Գրեմ	Գրենք
Գրես	Գրեք
Գրի	Գրեն

Ապառնի անցյալ

Գրեյի	Գրեյինք
Գրեյիր	Գրեյիք
Գրեր	Գրեյին

ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի կամ ներկա

Կը գրեմ	Կը գրենք
Կը գրես	Կը գրեք
Կը գրի	Կը գրեն

Անցյալ

Կը գրեյի	Կը գրեյինք
Կը գրեյիր	Կը գրեյիք
Կը գրեր	Կը գրեյին*)

Յենթադրական անցյալը կոչվում է նաև «պայմանական»

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի կամ ներկա

Պիտի գրեմ	Պիտի գրենք
Պիտի գրես	Պիտի գրեք
Պիտի գրի	Պիտի գրեն

Անցյալ

Պիտի գրեյի	Պիտի գրեյինք
Պիտի գրեյիր	Պիտի գրեյիք
Պիտի գրեր	Պիտի գրեյին

*) Այս ձևերը սովորական գրությամբ գրվում են առանց ը տառի:

Ա. Ն Կ Ա. Ն Ո Ն Բ Ա. Յ Ե Ր

Կան և անկանոն բայեր, վորոնք խոնարհման այս ընդհանուր կանոնին չեն յենթարկվում, այլ չեղվում են դրանից. որինակ՝ գալ բայի ներկա ժամանակը կլինի գալիս եմ և վոչ թե գալում եմ, ինչպես ասում են վորոշ բարբառներում: Լալ—լալիս եմ և վոչ թե լալում եմ, տալ—տալիս եմ և վոչ թե տալում եմ: Բայց՝ կարդալ—կարդում եմ, հաղալ—հազում եմ: Առաջին յերեքն անկանոն բայեր են, վերջին յերկուսը՝ կանոնավոր:

Մ Ա Կ Բ Ա Յ

Մակբայ կոչվում են այն բառերը, վորոնք խոսքի մեջ վորոշում են բայի ցույց տված գործողության ձևը, (առաջին բրիգադն իր պլանը կատարում է հարյուրամյակին) կամ ածականի ցույց տված վորակի աստիճանը (ավելի մեծ, շատ մեծ):

ԿԱՊ, ՇԱՂԿԱՊ, ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կապ (նախադրություն և հետադրություն) կոչվում են այն բառերը, վորոնք նախադասության մի անդամը կապում են իր լրացման հետ (գնում եմ դեպի տուն):

Շաղկապ կոչվում են այն բառերը, վորոնք կապում են նախադասությունը նախադասության հետ կամ նախադասության համադաս անդամները միմյանց հետ (գյուղացիքը գնաց դաշտ և ուսումնասիրեց այնտեղ կատարվող աշխատանքը: Մարկոսը հայտնեց, վոր իրենց թերթը լույս է տեսնելու վաղը):

Ձայնարկություն կոչվում են այն բառերը, վորոնք արտահայտում են խոսողի զգացմունքը, վերաբերմունքն այս կամ այն յերևույթին (ա՜խ, ո՜հ, հե՜յ, ավա՜ղ և այլն):

Ա. Շ Խ Ա. Տ Ա Ն Ք

Խոնարհեցեք վարել բայը:

VI ԴԱՍ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասություն կոչվում է մեկ կամ մի քանի բառով արտահայտած միտքը (մտածությունը): Որինակ՝ պատի թերթը լույս տեսավ: Խմբկոլը կազմակերպեց թերթի բարձրաձայն ընթերցանություն: Շտապենք: Գործը սպասում է մեզ: *Սրանցից յուրաքանչյուրը մի միտք է արտահայտում, ուրեմն և մի նախադասություն է:*

ՊԱՐԶ ՑԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախ մի քանի նախադասություն չպակցավելով իրար հետ՝ կազմում են մի բարդ նախադասություն, որինակ՝ Արամը գյուղ ընտապեց, վորպեսզի խմբկոլի նիստից չուշանա: *Սա յերկու պարզ նախադասություններից կազմված մի բարդ նախադասություն է, վորի մեջ յերկու միտք է արտահայտված.* 1) Արամը գյուղ շտապեց, 2) խմբկոլի նիստից չուշանա: «Վորպեսզի» *բառը չպակցող է:*

Ա. Ս Ա. Ց Վ. Ա. Ծ

Ասացված կոչվում են պարզ և բարդ նախադասությունները, յերբ առանձին վերցրած մի ամբողջացած, լրացած միտք են արտահայտում: Որինակ՝ 1) Թերթահավաքն սկսվել է: 2) Մենք մեր տասնորյա թերթը դարձրինք հնգորյա, վորպեսզի ավելի լավ լուսաբանենք թերթահավաքի խնդիրները: *Սրանցից առաջինը պարզ նախադասություն է և միաժամանակ մի ասացված, յերկրորդը բարդ նախադասություն է և միաժամանակ մի ասացված: Բայց յերկրորդ նախադասության յերկրորդ մասը* (վորպեսզի ավելի լավ լուսաբանենք թերթահավաքի խնդիրները) *ասացված չէ, քանի վոր առանձին վերցրած լրիվ միտք չի արտահայտում:*

Մենք խոսում ենք ասացվածներով: Միմյանց հաջորդող ասացվածներից են կազմվում մեր խոսվածքը, պատմվածքը, հոդվածը, բանաստեղծությունը և այլն: Ամեն ասացվածից հետո դրվում է վերջակետ:

ՀՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԻՋԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Յերբեմն յերկու նախադասություններն իրար հետ չաղկապվում են վոչ հաջորդաբար, այլ մեկը մյուսի մեջ մտնելով. որինակ՝ Արամը, վոր հեռակայող է, այսոր պարապմունքի չի յեկել: Այստեղ գլխավոր նախադասությունն է՝ Արամն այսոր պարապմունքի չի յեկել: «Հեռակայող է» յերկրորդական միջադաս նախադասություն է, վոր մտել է գլխավոր նախադասության մեջ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախադասության գլխավոր անդամներն են ստորոգյալ և յենթակա:

Ստորոգյալը ցույց է տալիս վորևե գործողություն, վիճակ, դրություն, հատկություն, վոր վերագրվում է յենթակային կամ ստորոգվում է յենթակայի վրա:

Յենթական ցույց է տալիս այն առարկան, վորին վերագրվում է կամ վորի վրա ստորոգվում է գործողությունը, վիճակը, հատկությունը:

Բացի յենթակայից և ստորոգյալից՝ նախադասություն կազմելու համար հարկավոր է նաև ստորոգում ցույց տվող մի բառ, վորով յենթական և ստորոգյալը կապվում են միմյանց հետ: Այդ բառն է եմ, լինեմ եյական բայը, վոր կարող է լինել նախադասության մեջ կամ չլինել, բայց բայի հետ հասկացվել, յենթադրվել: Որինակ՝ Վարդանը կարդում է: Այստեղ Վարդանը յենթական է (գործողություն կատարողը), կարդում է ստորոգյալն է (յենթակայի կատարած գործողությունը ցույց տվող անդամը), վորի հետ կա նաև է եյական բայը:

«Տունը բարձր է»: Այստեղ տունը յենթական է, բարձր ածականն ստորոգյալն է (յենթակայի հատկությունը ցույց տվող բառը) և է՝ եյական բայը: «Վարդանը կարդաց»: Վարդանը՝ յենթակա, կարդաց՝ ստորոգյալ, վորի հետ յենթադրվում է և եյական բայը:

Նախադասության մյուս անդամները յենթակայի կամ ստորոգյալի լրացումներն են, կամ լրացման լրացումները, վորոնք միտքն ավելի յեն ընդարձակում ու պարզաբանում, ցույց են տալիս տեղը, ժամանակը, ձևը և այլն:

ՁԵՂՁՈՒՄ

Պատահում է, վոր նախադասության մեջ յենթական կամ ստորոգյալը և մյուս անդամները դեղչվում են, այսինքն բառերով արտահայտված չեն լինում, այլ հասկացվում են իմաստով: Որինակ՝ յես գիրք եմ կարդում, իսկ դու՝ լրագիր: Յերկրորդ նախադասության մեջ դեղչված է «յես կարդում», լրիվ կլիներ այսպես՝ յես գիրք եմ կարդում, իսկ դու լրագիր ես կարդում:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Յենթական և բայը իրենց դեմքով ու թվով համաձայն են դրվում: Յեթե յենթական յեզակի է, բայն էլ յեզակի թվով է դրվում: Յեթե յենթական յերրորդ դեմքի է, բայն էլ յերրորդ դեմքով է դրվում:

Որինակ՝ հնձվորը գնաց, տրակտորիստը գործը վերջացրեց, ուսանողը կարդում է, ծառը բարձր է:

Այս նախադասությունների մեջ յեզակի յեն և՛ յենթական, և՛ բայը:

Հնձվորները գնացին, տրակտորիստները գործը վերջացրին, ուսանողները կարդում են, ծառերը բարձր են:

Այստեղ յենթականները հոգնակի դարձան, հոգնակի դարձան նաև բայերը:

Բազմակի յենթականների բայը դրվում է հոգնակի, որինակ՝ Տիգրանը, վարդանը և Սուրենը գնացին:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայերենում բառադասությունը նախադասության մեջ ընդհանրապես ազատ է: Ստորոգյալը դրվում է սովորաբար յենթակայից հետո (պարապմունքն սկսվեց): Սակայն վորոշ դեպքերում, այս կամ այն իմաստը չեշտելու համար, կարող է յենթակայի ու ստորոգյալի տեղափոխություն արվել: Նույնպես և լրացումների նկատմամբ:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. *Ի՞նչ է նախադասությունը:*
2. *Ի՞նչպիսի նախադասություններ են լինում:*
3. *Ի՞նչ է ասացվածը:*
4. *Վո՞րոնք են նախադասության գլխավոր անդամները:*
5. *Կարո՞ղ է լինել նախադասություն՝ առանց յենթակայի կամ առանց ստորոգյալի:*
6. *Կարո՞ղ է նախադասություն կազմվել առանց եյական բայի կամ «կապի»:*

VII ԴԱՍ

ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կետադրության նշանները գրավոր խոսքի մեջ խիստ կարևոր դեր են կատարում: Առանց այդ նշանների հաճախ մտքերն այնպես կխառնվեն, որ ոչ մի բան չի հասկացվի, այլ նույնիսկ հակառակ իմաստը կստացվի:

Կետադրության նշանները բաժանվում են 3 խմբի.

1. *ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ—վերջակետ (:), միջակետ (·), ստորակետ (,) և բութ (՝):*

2. *ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ—չեշտ (՛), հարցական նշան (՞) և բացականչական նշան (՛):*

3. *ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ — չակերտներ (,, ,, կամ « »), փակագծեր ( ), կախման կետեր (...), բազմակետ (.....), գիծ (—), յենթամնա (–), ապաթարց (՝):*

Վերջակետը դրվում է *յուրաքանչյուր պարզ և բարդ նախադասության վերջում, յերբ նախադասությունը ամբողջացած, լրացած մտք է հայտնում և մի առանձին ասացված է կազմում:*

Միջակետը դրվում է *ա) բարդ համադաս նախադասության մեջ համադաս նախադասություններից հետո. որինակ՝ բոլոր բրիգադները դաշտ դուրս յեկան. գերանդիներն ու մանգաղները պատրաստ էին. խմբկոմն իր թերթը դաշտ փոխադրեց. հնձի յեռուն շրջանն սկսվում ե՛ր: Այսպիսի նախադասությունները վերջակետով ել են բաժանվում իրարից:*

բ) Ուրիշի ուղղակի խոսքը մեջ բերելիս, այդ խոսքից անմիջապես առաջ. որինակ՝ խմբագիրն ասաց. «Տղերք, մեր թերթի այս համարն անցյալից ավելի լավ դուրս յեկավ»:

Ստորակետը դրվում է՝ *ա) գլխավոր ու յերկրորդական նախադասությունների միջև (քեզ ասացի, որ գնաս, թերթը բերես):*

բ) Նախադասության բազմակի համադաս անդամների միջև (Արամը, Սուրենը, Մարկոսը և Խորենը խմբկոմի անդամներ են):

գ) Միջանկյալ բառերի և միջադաս յերկրորդական նախադասությունների յերկու կողմերում. 1) Մեր թերթը, իհարկե, ամենահաջողն է: 2) Մարկոսը, որ յերեկ մեր տանն եր, արդեն մեկնել է քաղաք:

«Յեվ» շաղկապից առաջ ստորակետ է դրվում այն դեպքում, յերբ հաջորդ նախադասության մեջ յենթական փոխվում է (նախադասվը

դիտեմ, վոր յես գնալու յեմ, և ինձ սպասում է), նաև այն դեպքում, յերբ այդ «և»-ը չեշտված է գործածվում (Ցե՛վ Արամը, և՛ Վահանը, և՛ Մարկոսը ճիշտ ժամանակին յեկան):

Բուքը դրվում է ա) բացահայտյալի վրա (հիմա կգա Արամը՝ մեր թերթի խմբագիրը): Բուքի փոխարեն այս դեպքում դրվում է նաև ստորակետ:

բ) Ուրիշի ուղղակի, բայց շատ կարճ խոսքից առաջ (նա ասաց՝ ուզում եմ):

գ) Ցերը դեղչվում է ստորոգյալը (յես խմբագիր եմ, դու՝ թղթակից):

դ) Դերբայական լրացումով արտահայտած պարագայի վրա (այդ մասին տեղեկանալով՝ տուն չտապեցի):

Շեշտը դրվում է այն բառի վրա, վոր պիտի արտասանվի շեշտված:

Հարցական նշանը դրվում է այն բառի վրա, վորով հարցում է արվում:

Զակերտները դործ են ածվում ուրիշի ուղղակի խոսքը մեջ բերելիս:

Գրելիս չակերտների մեջ են առնում նաև թերթերի, ամսագրերի, գրքերի անունները:

Զակերտները դործ են ածվում նաև ծաղրական իմաստով:

Փակագծերի մեջ են առնվում այն միջանկյալ բառերն ու նախադասությունները, վորոնք հիմնական նախադասության հետ միասին հեռավոր կապ ունեն:

Կախման կետեր դրվում են կիսատ արտահայտած նախադասության վերջում:

Գիծը դրվում է այն ժամանակ, յերբ հաջորդաբար գրում են խոսակիցների անմիջական խոսքերը:

Որինակ՝

Արամը հարցրեց,

— Այսոր խմբկոլլեկտիվ նիստ լի՞նելու յե.

— Վոչ, հետաձգվել է, — պատասխանեց Տիգրանը:

— Ինչու՞:

— Գնալու յենք շրջանային կենտրոն:

Գծով նաև անջատվում են նախադասությունները:

Գծիկը դրվում է յերկու բառ իրար միացնելու դեպքում (խրր-ճիթ-ընթերցարան, ամառ-շաբաթ):

Ցենքաթեռն դրվում է տողադարձի ժամանակ:

Ապաթարցը՝ սղված ձայնավորի ը-ի փոխարեն — կ'ասեմ, կ'առնի: Բայց ապաթարցը քիչ է գործածվում, գրում ենք՝ կասեմ, կառնեմ:

ԱՇԽԱՏԱՆՔ

Գրեցեք մի փոքրիկ հոդված, վորի մեջ գործածեք բոլոր կետադրական նշանները:

VIII ԳԱՍ

ՎՈՃԸ

Լեզվի կոնսուլտանտը պետք է հետևի հեռակայողների վոճի հստակությանը, պարզությանը, հարստությանը:

Պետք է հետևել, վոր կազմված թղթակցությունների մեջ ավելորդաբանություններ ու կրկնություններ չլինեն: Վոճի հստակությունը խիստ անհրաժեշտ բան է թերթում աշխատողի համար:

Նյութի բնույթից էլ բղխում է վոճը: Որինակ՝ ագրոտեխնիկային վերաբերող հոդվածը պիտի գրված լինի ավելի գիտական վոճով, առանց ավելորդ պատուճանների, իսկ դաշտում աշխատողների թափն ու խանդավառությունը նկարագրելիս կարելի է գեղարվեստական թեքում տալ գրվածքին:

Գլխավորն այն է, վոր գրողն ամենից առաջ լավ տիրապետի իր նյութին, պարզորեն գիտենա, թե ինչ խնդիր է արծարծում, ինչ լուծում է պահանջում և կարողանա իր մտքերը վորոշ հաջորդականությամբ պարզել:

Պետք է խուսափել յերկար ու տաղտկալի առաջաբաններից: Քիչ չի պատահում, վոր մի փոքրիկ փատաթուղթ հաղորդելու համար թղթակիցը սկսում է դատողություններ անել շատ հեռուներից և իր նախաբանն այնքան է ձգձգում, վոր նրա ծանրության տակ կորչում է հիմնական խնդիրը, վորի մասին ուզում է գրել:

Վոճի, գրվածքի պարզության, պատկերավորության, ավելորդաբանությունների, բառերի սխալ գործածության և նման խնդիրների մասին խոսելիս առավելապես պետք է ողտագործել հեռակայողների գրավոր աշխատանքները:

Մեկի գրածը պետք է տալ մյուսին՝ ուղղելու: Հաջող գրված նյութերը պետք է կարդալ բոլորի առաջ և բացատրել, թե վորոնք են նրա առավելությունները:

Պետք է խուսափել դավառաբարբառներից, ոտար բառերի անտեղի գործածությունից, դանդաղկարանությունից և գրաբարաբանությունից: Պատի թերթի լեզուն պետք է լիովին հասկանալի լինի իր ընթերցողներին:

Այս նպատակին պիտի հետապնդի լեզվի կոնսուլտանտը: Այս նպատակին պիտի հետապնդեն նաև հեռակայողները:

Հանձնված է արտադրության 28 մայիսի 1937 թ.
Ստորագրված է տպագրության 20/VI 1937 թ.

Պատվեր № 24 Տիրաժ 1800 Գլավլիտ № 373

ՀԿ(Բ)Կ ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ

8256

323

SP·LAI·U E 2AI· [7]4.

A II 1313

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Задание 5-ое

Составил А. АРУТЮНЬЯН
Редакт. проф. М. АБЕГЯН

Проз. 1940 г.

Пров.

Издательство ЦККП(б)А „Хорурдаин Айастан"
Ереван—1937 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0013028

ЦЕНА
II
13132